



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

ԴԻԶԱՅՆ

ԱՌԱՐԿԱ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՀԵՂԻՆԱԿ

ՆԱԻՐԱ ՅՈՒՐԻԿԻ ՄԻՍՈՆՑԱՆ

ՄԱՐԶ

ԵՐԵՎԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գլուխ 1. Դիզայնի զարգացման պատմություն.....	4
Գլուխ. 2 Թեմայի պարզաբանում.....	6
Գլուխ 3. Դիզայնի հիմնական տարրերը Էրգոնոմիկա.....	7
Գլուխ 4. Կոմպոզիցիա: Ծաղիկների ոճերը.....	8
Գլուխ 5. Գունաբանություն.....	19
Օրվա դասի պլան.....	24
Եզրակացություն.....	27
Գրականություն.....	28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Տեխնոլոգիա» հանրակրթական առարկան բազմաբնույթ է, այն ընդգրկում է գրաֆիկա, փայտամշակման և մետաղամշակման տեխնոլոգիա, նյութերի գեղարվեստական մշակում, հագուստի նախագծում և մոդելավորում, կարի տեխնոլոգիա, խոհարարություն, դիզայն, մեքենագիտություն, ռադիոտեխնիկական աշխատանքներ և այլն:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսումնական ծրագրում ընդգրկված է նաև դիզայն թեման: Այդ ծրագրի սահմաններում սովորողը ծանոթանում է դիզայնի, նրա ծագման պատմության հետ:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում խորացնելու գիտելիքները, աշխատանքի պլանավորման, կազմակերպման, ինչպես նաև անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման բնագավառներում:

Դիզայնը անհրաժեշտ գիտելիք է բոլորի համար, քանի որ այն վերաբերում է կենցաղային առարկաներին, հագուստին ,ծաղիկներին:

Դիզայնը տերմին է, որով նշվում է առարկայական աշխարհի նախագծման նոր եղանակը: Դիզայնի նպատակն է դաստիարակել գեղագիտական ունակություններ, սերմանել սերը գեղեցիկի հանդեպ:

Սովորողը պետք է իմանա, որ առարկան պետք է ունենա ոչ միայն արտաքին գեղեցկություն, այլ նաև լինի հարմար օգտագործման մեջ:

Տեխնոլոգիա առարկայի շրջանակներում սովորողը ծանոթանում է կոմպոզիցիայի և նրա տեսակներին, իմանում է նրա հիմնական կատեգորիաները: Դիզայնը մշակում է ժամանակակից հասարակության բարդ գործունեության միջավայրը նպատակահարմար կազմակերպելու տիպային օրինակներ:

Դիզայնը սովորեցնում է նաև գույներին և գունավորմանը, երանգների հագեցվածությանը, պայծառությանը և գույների շարքին: Տվյալ ռեֆերատը նվիրված է «Դիզայն» թեմայի դասավանդման առանձնահատկություններին:

Գլուխ 1. Դիզայնի զարգացման պատմությունը

Դիզայնի պատմությունը սկսվում է դեռևս այն ժամանակներից, երբ հայտնվեցին աշխատանքի առաջին գործիքները, երբ զգացվեց անհրաժեշտություն դրանք դարձնել ավելի հարմար, օգտակար ու գեղեցիկ:

Դիզայնի պատմությունը նման է լեգենդի: Դիզայնի պատմական ակնարկները և մեկնաբանումները շատ բազմազան են: Դիզայնը դա երևույթ է, որն ունի հազարամյակների պատմություն: Այն արտահայտվում է առարկաների աճով, որոնց ստեղծմանը անմիջապես մասնակցում է դիզայները:

Դիզայնն անգլերեն է. նշանակում է նախագծել, մտահղանալ: Դիզայնի սկզբունքները ձևավորվել են XIII դարի կեսերին, սակայն, որպես առարկայական միջավայրի տեսողական և գործառնական հատկությունների նպատակային ձևավորման միջոց, սկզբնավորվել է հիմնականում XX դարի սկզբին: Դիզայնը նախատեսում և լուծում է արտադրության, սպառման, մարդուն շրջապատող առարկայական միջավայրի խնդիրներ: Դիզայնի և նրա տեսական հիմքի ծագումն ու ձևավորումը պայմանավորված են տեխնիկայի և արվեստի բնագավառների տարանջատման, արտադրության կազմավորման դարաշրջանի հետ: Ներկայումս գեղանկարիչ-նախագծողները (դիզայներ) զբաղվում են առարկայական աշխարհի գեղագիտական վերափոխման խնդիրներով: Դիզայնի տեսական հիմքը՝ տեխնիկական գեղագիտությունը, ուսումնասիրում է նրա հասարակական բնույթն ու զարգացման օրինաչափությունները, գեղարվեստական նախագծման սկզբունքներն ու եղանակները, դիզայներ-ճարտարագետի մասնագիտական վարպետության խնդիրները: Տեխնիկական գեղագիտության հիմնական բաժիններն են դիզայնի ընդհանուր տեսությունը և գեղարվեստական նախագծման տեսությունը: Դիզայնի կարևորագույն ճյուղեր են արդյունաբերական, ճարտարապետական նաև հանդիսությունների, ծրագրերի, զանազան ոճերի և այլնի ձևավորումները: Ժամանակի ընթացքում փոխվում են գեղագիտական պահանջումներն ու սահմանները: Ամերիկացի գեղագետ Թոմաս Մոնրոն, օրինակ, մեր օրերում դասական արվեստների շարքում դիզայնի ոլորտ է ներառում նաև պլաստիկ վիրաբուժությունը,

դիմահարդարումը, օժանելիքի պատրաստումը, խոհարարությունը, հագուստի նորաձևությունը և այլն:

Մեծ է դիզայնի զարգացման հեռանկարը Հայաստանում, որտեղ նույնպես վերջին տարիներին բացվել են դիզայնի կենտրոններ:

Դիզայնում կարևոր են նաև գունային լուծումները: Վոլֆգանգ Գյոթեն ժամանակին նկատել է, որ գույները մարդու մեջ արթնացնում են հոգեբանական առանձնահատուկ տրամադրություններ:

Միայն նախագծման, արտադրության և սոցիալական միջավայրի, սպառողի պահանջարկի, առարկայի օգտակարության և գեղեցկության հատկանիշների համակողմանի համադրմամբ արտադրանքը կարող է դառնալ առավել օգտակար և հարմարավետ:

Դիզայնի տեսությունը կոչվում է տեխնիկական էսթետիկա: Տեխնիկական էսթետիկան կազմում է դիզայնի տեսական հիմքը, ուսումնասիրում է նրա հասարակական բնույթը և զարգացման օրինաչափությունները, գեղարվեստական ստրուկտորական սկզբունքները և եղանակները, դիզայների պրոֆեսիոնալ գործունեության և վարպետության պրոբլեմները:

Դիզայնի տեսությունը շատ կարևոր դեր է խաղում ներդաշնակ զարգացած մարդու դաստիարակման մեջ, նրա մոտ էսթետիկական ճաշակի զարգացման համար:

Դիզայնը դա ոճաբանության, զարգացման և համակցության արվեստ է:

Գլուխ 2. Թեմայի պարզաբանում

Յուրաքանչյուր առարկա, բացառությամբ արվեստի ստեղծագործությունների, ունի կենսականորեն անհրաժեշտ այս կամ այն նշանակությունը, որով որոշվում է դրա ֆունկցիոնալ արժեքը: Սակայն յուրաքանչյուր մարդ ձգտում է իրեն շրջապատել համար, գեղեցիկ և հաճելի առարկաներով: Այս հատկություններով որոշվում է առարկայի գեղագիտական արժեքը: Մարդու պահանջմունքները բավարարելու համար առարկայի նախագծման ժամանակ այս երկու արժեքներն էլ պետք է հավասարապես հաշվի առնել: Այսպիսի նախագծումն ընդունված է կոչել դիզայն, որը նշանակում է նախագիծ, մտահղացում, գծագիր, տեսք: Դիզայնի խնդիրը մարդու նյութական հոգևոր պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ ներդաշնակ միջավայրի ստեղծումն է:

Դիզայնը նյութական միջավայրի ձևավորման նախագծային, գեղարվեստատեխնիկական գուրծունեության ձև է:

Դիզայնի տեսակները

Դիզայնն ունի իր ներքին ժանրերը և կիրառման բազմաթիվ բնագավառները:

Ծաղկի դիզայն, հագուստի դիզայն, գլխարկի դիզայն, սենյակի դիզայն, դիզայն /ֆուրջետներ / հագուստի դիզայն և այլն:



Գլուխ 3. Դիզայնի հիմնական տարրերը

Էրգոնոմիկա

Էրգոնոմիկան դիզայնի հիմնական տարրերից մեկն է, որն ուսումնասիրում է մարդու աշխատանքային գործունեության ճիշտ կազմակերպման օրենքները: Էրգոնոմիկայի հիմնական խնդիրներն են՝

- Աշխատանքը կազմակերպել՝ ելնելով մարդու կենսաբանական և հոգեկան հնարավորություններից:

- Ապահովել աշխատանքի արդյունավետություն՝ ծախսելով նվազագույն կենսական ռեսուրսներ և չստեղծելով վտանգներ մարդու առողջության համար:

Դիզայներական նախագծման գորընթացում պետք է բավարարվեն էրգոնոմիկական հետևյալ պահանջները՝ մարդու մարմնակազմվածքի չափերը, աշխատանքային, իջավայրի տեսադաշտը, մարդու աշխատանքային դիրքը, ուժայի հնարավորությունը, ռեակցիան գույնի, ձևի և այլ էսթետիկական պարամետրերի նկատմամբ: Այս բոլոր պահանջները հաշվի են առնվում աշխատատեղը նախագծելիս: Աշխատատեղի կառուցվածքը պետք է ապահովի աշխատանքային գործողությունների իրականացումը մարդու շարժողական դաշտի սահմաններում՝ կախված պահանջվող ճշտությունից և գործողությունների հաճախությունից:

Աշխատատեղի կառուցվածքը պետք է ապահովի նաև աշխատողի բարենպաստ դիրքը: Դա կարելի է իրականացնել՝ կարգավորելով աշխատանքային մակերևույթի, նստելատեղի, ոտքերի գրաված տարածության և ոտքերի տակդիրի բարձրությունները:

Կոմպոզիցիա

Կոմպոզիցիան ստեղծագործություն է, կառուցվածք, ստրուկտուրա, որն ունի իմաստ, նշանակություն, գաղափար, ունի գույն, գունային և ծավալային ճիշտ ընտրություն, դինամիկա և նորույթ, ասելիք: Կոմպոզիցիան պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

1. Այն պետք է ունենա ոճ (ենթաոճ), այսինքն պետք է ունենա ձև, բովանդակություն
2. Էլեմենտների (տարրերի) միջև հարաբերակցություն (մասշտաբ, ծավալ)
3. Պետք է ունենա գունային ճիշտ համակցում (լուծում)
4. Դինամիկա, այլ կերպ՝ ռիթմ
5. Հավասարակշռություն
6. Պետք է ունենա համապատասխան ֆոն, այսինքն տեղի ճիշտ ընտրում (լուծում)
7. Տեքստուրա կամ ֆակտուրա, դա վերաբերում է ծաղիկների նյութակազմությանը:

Գոյություն ունի երեք տեսակի կոմպոզիցիաներ՝ ճակատային, ծավալային և խորքատարածքային:

Հավասարակշռություն

Այս գործոնն ունի առաջնակարգ նշանակություն, քանի որ չբալասանավորված ասիմետրիկ կոմպոզիցիան կարող է հեշտությամբ ընկնել, դրա համար անհրաժեշտ է ունենալ վստահելի ամրացում:



Տեքստուրա ֆակտուրա

Բնության բոլոր տերևները և կանաչները որոնք կոչվում են բուսական նյութ ունեն տարբեր կազմություն՝ փայլուն, փայլատ, փշավոր, թավշե և այլն:

Տարբեր ֆակտուրաների օգտագործումը անհրաժեշտ է կոմպոզիցիան միապաղատությունից փրկելու համար:

Ֆոն

Նույնիսկ համաչափության ճիշտ լուծման դեպքում կոմպոզիցիան կարող է չդիտվել ոչ ճիշտ ընտրված ֆոնի վրա, դրանից խուսափելու համար կարելի է նախապես մտածել մի քանի գործոնի մասին.

1. նախ կարևոր նշանակություն ունի սենյակի ոճը (ինտերյեր)
2. Կարևոր է ինտերյերի չափերը եթե առաստաղը բարձր է, դրվի փոքրիկ ծառ

Համաչափություն

Ծաղկային կոմպոզիցիան բաղկացած է իրար հետ սետրորեն կապված մի քանի էլեմենտներից աման, բուսական նյութ: Պահպանել համաչափությունը նշանակում է սրանցից յուրաքանչյուրը պահել այնպիսի չափերի մեջ, որ կոպոզիացիան թողնի հաճելի տպավորություն:

Անհմաչափ կարող է դիտվել ցանկացած կոպոզիցիա եթե խախտված է հարաբերակցությունը ծաղկամանի և կանաչ մասի միջև: Դարդերի ընթացքում իդեալական համաչափությունը գտնում են Լեոնարդո Դա Վինչիի «Ոսկե կանոն»-ի օգնությամբ, դրա էությունը կայանում է նրանում, որ եթե նշանակենք ամանի բարձրությունը՝ 3 մաս, բուսական նյութը՝ 5 մաս, ապա 3-ը հարաբերում է 5-ին, այնպես ինչպես վերին մասը՝ 5 վերին կոմպոզիցիան: Եթե ամանը նշանակում ենք 1 միավոր ապա կանաչ կոպոզիցիոն մասը պետք է լինի առնգան 1.5, ավելի թույլատրելի է 2, 3, 5 անգամ: Լայն ամանների դեպքում ընդունվում է ոչ թե ամանի բարձրությունը, այլ ամանի լայնությունը:



Գլուխ 4. Ծաղկային ձևավորման ոճերը

Ծաղկային ձևավորման ոճերը անհնար է դասակարգել, քանի որ հասնում են մի քանի հարյուրի: Այնուամենայնիվ ամենաընդհանուր չափանիշներով առանձնացնել մի քանի խումբ, որպեսզի օգնենք դիմացինին և ինքներս մեզ, ընտրելու մեր նախընտրած ոճը, որը լավագույնս համապատասխանում է մեր կարողություններին, գեղարվեստական հակումներին, տեղին՝ որտեղ պետք է տեղադրվի և մեր ունեցած բուսական նյութին: Առաջին հերթին պետք է ճշտել մեր կոպոզիցիան լինելու է միակողմանի թե բազմակողմանի, աշխատելու ենք խիստ ոճով թե ազատ: Ազատ ոճով կոմպոզիցիան նախնական, մարնրակրկիտ աշխատանք չի պահանջում, խուսափում ենք երկրաչափական ձևերից: Խիստ ոճերի դեպքում անհրաժեշտ է հետևել որոշակի կանոնների: Նախապես մտածել բուսական նյութի դասավորության մասին: Այս բնութագրերն անհրաժեշտ են, որպեսզի ավարտենք կոմպոզիցիայի վիզուալ տեսքը: Սակայն բավարար չէ, որպեսզի նկարագրենք կոմպոզիցիայի տիպը: Այժմ նկարագրենք դասակարգումները որոնք ենթարկվում է եթե ոչ կոմպոզիցիաները, ապա նրանցից մեծամասնությունը:



Զանգվածային կամ մասսայական ոճ

Այս կոմպոզիցիան յուրահատուկ է նրանով, որ սահմաններում չկա ազատ տարածություն, այն ամբողջովին պատված է ծաղիկներով:

Գծային ոճի կոմպոզիցիաներ

Այս ոճի կոմպոզիցիան յուրահատուկ է նրանով, որ ազատ տարածքի առկայությունը անհրաժեշտություն է:



Գծաձավալային ոճ

Այս ոճում կա թե գիծ, թե զանգված:



Խառնի ոճի կոմպոզիցիա

Այս ոչի կոմպոզիցիան բոլոր ոճերի խառնուրդն է, որտեղ զանգվածը և գծերը հաջորդում են իրար:



Զանգվածային ոճ

Այս ոճը առաջացել է Եվրոպայում 14-16-րդ դարերում, յուրահասակություններից մեկն այն է, որ կոպոզիցիան ունի ֆոկուսային կետ, կամ ուշադրության կենտրոն, որտեղ ծաղիկները ավելի շատ ձուլվում են իրար, քան կոնտրաստ կազմում:

Զանգվածային ոճի ենթաոճերն են՝ փունջ ծաղկամանում, և բիդերմեյեր:



Գծային ոճ

Գծային ոճը իր ձրաչափերով հակադրվում է զանգվածային ոճին: Այս կոմպոզիցիաների յուրահատկությունն այն է, որ յուրաքանչյուր տարր ունի որոշակի նշանակություն:

Ընդհանուր տպավորությունը կախված է նրանից թե ինչպես է խաղարկվում գծերի միջր եղած տարածությունը:

Ուղղահայաց կոմպոզիցիա.

Սա գծային ոճի միակ ենթատճն է որտեղ պահպանվում է երկրաչափական սկզբունքները:

Սա գծային ոճի միակ ենթատճն է, որտեղ որոշ չափով պահպանում է երկրաչափական սկզբունքները:



Ազատ ոճով կոմպոզիցիա



Այս ոճի յուրահատկությունը այն է, որ գծային նյութը չի ծածկվում ծաղիկներով, իսկ որպես երկրորդական օգտագործում ենք գեղեցիկ տպավորից

ծաղիկներ:

Գծածավալային ոճ

Գծածավալային ոճը գծային և ծավալային ոճերի խառնուրդն է, որի ճիշտ կառուցման դեպքում, գծային՝ ուղղահայաց մասը հեռացնելիս կոմպոզիցիան վեր է ածվում ծավալայինի կամ հակառակը:



Միմետրիկ եռանկյուն.



Այս ենթառճում ծաղիկների իմաստային նշանակությունը մղվում է հետին պլան, գլխավոր խումբը թելադրում է եռանկյան երկրաչափական կենտրոնը:

Խոշոր գլխով ծաղիկներին հաջորդում է մանր գլխով ծաղիկները, սա կանոնավոր խիստ գծերով արտահայտված կոմպոզիցիա է:

Ասիմետրիկ ոճ

Սա ազատ ոճի, ոչ պարտադիր ձև ունեցող կոմպոզիցիա է սակայն տեսքը ավելի տպավորիչ է:



Կիսալուսնաձև ոճ



Այս ոճի համար ամենակարևոր պահն այն է, որ պատրանք ստեղծվի որ կիսալուսնի ձև ունեցող ճյուղը կտրել անցել է օազիսի միջով:

Հոգարդի գիծ

Սա կոչվում է գեղեցկության գիծ, որը հիշեցնում է լատիներեն S տառի երկարաձգված տեսքը:



Հակադարձ լուսին



Հովհարաձև

Սրանք ավելի շատ պարզ աշխատանքներն, որոնք շատ հարմար են ամռանը ժամանակավորապես բուխարիկը ծածկելու համար:



Գլուխ 5. Գունաբանություն

Դիզայնի արտահայտչական միջոցներից մեկը գույնն է, որն ակտիվորեն ներգործում է մարդու զգայական և հոգեկան իրավիճակի վրա:

Գույների և դրանց փոխազդեցությունների ուսումնասիրությամբ զբաղվում է մի գիտություն, որը կոչվում է գունաբանություն:

Գիտական գունաբանության հիմնադիրները համարվում են՝ Արիստոտելը, Նյուտոնը, Լեոնարդո Դա Վինչին և Գյոթեն:

Զգայական տեսանկյունից գույնը կարող է մեզ ուրախացնել կամ տխրեցնել, հանգստացնել կամ գրգռել: Այդ է պատճառը, որ ոմանք սիրում են վառ, արտահայտիչ, հնչեղ գույները, ոմանք էլ սիրում են հանգած տոները:

Ֆլորիստի համար գույնի տեսությունը լավ գերազանց իմանալը ուղղակի անհարժեշտություն է քանզի, եթե նկարիչը իր ցանկացած գույնը ստանում է ներկապնակի գույները իրար խառնելով, ապա Ֆլորիստը գունային գամման ստանում է ծաղիկների, տերևների, ճյուղերի, բնական և այլ պարագաների, լրացնող իրերի /աքսեսուարների/ ինչպես նաև ամանի օգնությամբ և քանի որ գույնը ընկալվում է ոչ միայն օպտիկորեն այլև զգայական:

Նույն գույնի տարբեր երանգները կոչվում են տոներ: Տարբերում ենք՝ տաք և սառը գույներ: Տաք գույները կենդանացնում են կոմպոզիցիան, շատ էֆեկտով են և անմիջապես գրավում են դիտորդի ուշադրությունը: Տաք գույներն են՝ կարմիրը, դեղինը, նարնջագույնը: սառը գույները հանգստացնում են և նույնիսկ տաք եղանակներին ստեղծում են գովության պատրանք; եթե տաք գույները ստեղծում են օպտիկական մոտիկություն, ապա սառը գույները ստեղծում են տեսողականորեն հեռավորության պատրանք /զգացողություն/: Կան նաև ծանր և թեթև գույներ: Գունային սպեկտորում գունային ծանր գույներն են՝ կարմիրը և մանուշակագույնը:

Թեթև գույներն են՝ դեղինը և կանաչը, սա նույնպես հարաբերական է, նայած թե որ գույնը, որի հետ է համադրվում /նարնջագույնը՝ համարվում է թեթև գույն կարմիրի նկատմամբ և ծանր գույն դեղինի նկատմամբ/: Գույները օգտագործվում են որպես կոմպոզիցիայի ակտիվ միջոցներ:

Արևի լույսի սպեկտորն ամենա հարուստն է, որի շնորհիվ մենք ընկալում ենք աշխարհի բազմազան գույների հմայքը:

Գունային համադրություններ և հակադրություններ

Ժամանակակից գծային կոմպոզիցիաներում հաճախ ձգտում են խաղարկել, լավացնել գունային լուծումը օգտագործելով մաքուր գույներ կամ մաքուր հակադիր գույներ:

Օրինակ՝ կոմպոզիցիա կապույտ հիբիկներից (ирис), նարնջագույն գերբերաններից, երկու դեղին վարդ, մանուշակագույն լիզիանտուս, պրոտեա և այլն: Պետք է հիշել, որ ավելի լավ են դիտվում բաց նրբերանգներից կամ տոներից հակադրությունները: Օրինակ՝ վարդագույնը բաց եիկնագույնի հետ, շականակադեղնագույնը թույլ մանուշակագույնի հետ, կա մի հետաքրքիր տարբերակ ևս, երբ որևէ գույնի բաց երանգը օգտագործել հակադիր գույնի մուգ տոնի կամ երանգի հետ: Այս ամենը մտնում էր հակադիր գույների կոմպոզիցիայի մեջ:

Անալոգ կամ նմանատիպ գույներով կոմպոզիցիաներ, այս դեպքում կարելի է օգտագործել իր հարևան երեք կամ չորս գույնի ծաղիկներ: Այս դեպքում պարտադիր չէ օգտագործել միայն մաքուր գույները: Կոմպոզիցիան ավելի նրբաճաշակ է դառնում, երբ այն հավաքվում է նույն գույնի տարբեր տոների ծաղիկներով, կապույտ և թույլ մանուշակագույն, ավելացնել սպիտակ: Սպիտակ ծաղիկները թարմացնում են և կապակցում են կոմպոզիցիան: Կոմպոզիցիան ավելի շահեկան է դիտվում, երբ օգտագործում են ոչ հավասար քանակով ծաղիկներ: Օրինակ՝ կապույտը կարող է մի քանի հատով ավելի շատ լինի քան մանուշակագույնը:

Գունային համադրություններ Մոնոքրոմատիկ գույների փնջեր կամ կոմպոզիցիաներ

Սա ամենահեշտ և ամենանրբաճաշակ տարբերակն է: Օրինակ՝ կարմիր ծաղիկներով և երանգներով կարելի է ստեղծել դրամատիկական տրամադրություն:

Վառ դեղին - կենսուրախություն

Կապույտ, երկնագույն, մանուշակագույն – հանգստություն

Շատ գեղեցիկ և էֆեկտով է դիտվում երբ օգտագործում են նույն գույնի տարբեր տոները, սակայն սա չի նշանակում, որ ամբողջը պետք է վերաբերվի միայն ծաղիկներին կարմիր ծաղիկներով կոմպոզիցիաներում, բաց կարմիր կամ մուգ կարմիր գույնի կարող է լինել տերև, հատապտուղ կամ արքեսուար (լրացնող իր):

Գույնը և տարվա եղանակը

Ճապոնիայում գույնի ընտրությունը կախված է տարվա եղանակից: Եվրոպայում նույնպես գոյություն ունի սեզոնային գունային սիմվոլիզմ: Օրինակ՝

Գարուն - օգտագործվում է դեղինի և երկնագույնի համադրությունը

Աշուն - դեղինի, նարնջագույնի և շականակագույնի համադրությունը

Ամառ - գունային հրավառություն (կարմիր, կապույտ, կանաչ, դեղին, նարնջագույն, ըկնագույն, վարդագույն)

Զմեռ - սպիտակ, ոսկեգույն, վառ կարմիր

Ինչպե՞ս ճիշտ համադրել գույները հագուստում

Գույների ճիշտ համադրելուց է կախված, թե որքան ներդաշնակ ու նորաձև կլինի Ձեր արտաքին տեսքն ու լուրը: Գունային համադրություններ ընտրելիս չպետք է մոռանալ, որ գոյություն ունեն հատուկ կանոններ ու օրինաչափություններ: Առաջին հերթին նայիր գունային սպեկտրին և փորձիր կողմնորոշվել: Սպեկտրը իրենից ներկայացնում է գույների ներդաշնակ ընդլայնում այնպես, ինչպես դա կա բնության մեջ. սպեկտրի ամենապարզ օրինակը ծիածանն է: Եթե սպեկտրը բաժանենք չորս խմբերի, ապա կստանանք չորս, միմյանց կապված գունային խմբեր: Դրանք են՝ կարմիր-նարնջագույն-դեղին, բաց կանաչ-կանաչ-փիրուզագույն, երկնագույն-կապույտ-մուգ կապույտ, մանուշակագույն-բաց մանուշակագույն-վարդագույն: Ինչպիսի՞ համադրումներից կարող եք օգտվել.

1. Հարազատ

Միևնույն խմբի գույները իրար հետ համադրելիս դուք կստանաք նուրբ ու մեղմ գույներ: Կերպար, գույները միմյանց ամբողջապես կլրացնեն: Սակայն հետևեք, որպեսզի գույները հավասարաչափ հագեցած լինեն, հակառակ դեպքում աններդաշնակ կերպար կստանաք:

2. Հարազատ-կոնտրաստային

Նման գույները գտնվում են սպեկտրի հարևան խմբում: Կախված գույների խտության աստիճանից, դրանցում ընկած գույների քանակը կարող է լինել մոտ երկուսից երեք գույն: Նման համադրությունները ամենաանվտանգն են: Գրեթե բոլոր գույները համադրելով հետևյալ սկզբունքով, կարելի է ստանալ գեղեցիկ ու ներդաշնակ լուր:

3. Կոնտրաստային գույներ:

Այս գույները գտնվում են սպեկտրի տրամագծորեն հակառակ կողմերում: Նախկինում կարծիք կար, որ որքան ավելի տարբեր են գույներն իրենց խտությամբ և լուսավորությամբ, այնքան ավելի քիչ են ներդաշնակում միմյանց: Բայց ներկայումս նորձևության մեջ գերիշխում են հենց կոնտրաստային համադրությունները:

Կոնտրաստային համադրությունները շատ են անգամ բնության մեջ, օրինակ՝ կարմիրը կանաչի հետ, մանուշակագույնը դեղինի հետ և այլն: Գոյություն ունեն նաև գույներ, որոնք չունեն գույն, այլ տարբերակվում են ըստ պայծառության աստիճանի. այդ գույներն են՝ սևը, սպիտակը և մոխրագույնը: Ամենավառ գույնը սպիտակն է, իսկ սևը առհասարակ պայծառություն չունի: Այս գույները ինչպես իրար հետ, այնպես էլ ցանկացած այլ գույնի հետ հրաշալիորեն համադրվում են:

Օրվա դասի պլան

Ամիս, ամսաթիվ՝ _____ 2023թ

Դասի տևողություն՝ 90 րոպե

Դասի թեման՝ Դիզայնը և նրա տեսակները

Դասարան՝ VII

Դասարանի կահավորում՝ պաստառներ, մակետներ

Դասի նպատակը՝

ծանոթացնել աշակերտներին դիզայնի պատմությանը: Ուսուցանել էրգոնոմիկայի պահանջները դիզայնում: Տալ գաղափար դիզայնի տեսակների մասին: Իմանալ ինչ է գունաբանություն, տաք և սառը գույներ:

- դիզայնի մասին գիտելիքների ձեռք բերում
- մեր կյանքում այս ոլորտի դերակատարության նշանակությունը
- Ճաշակի զարգացում, գունային զգացողության զարգացում

Խնդիրները՝

զարգացնել զույգերով աշխատելու կարողությունը, աշխատանքային խմբերի ձևավորում:

- տեխնիկական մտածելակերպի զարգացում
- աշակերտի երևակայական մտածողության զարգացում
- ձևավավորել սովորածը կենցաղում գործածելու կարողություններ

Ուսուցման նյութեր և միջոցներ՝

- ալբոմներ, դասագրքեր, դիտակտիկ նյութեր, պաստառներ
- գրականություն, նկարներ, համացանց S2S

Ուսուցման մեթոդներ՝

- ցուցումներ, ցուցադրում
- ինքնուրույն, գործնական աշխատանք

Միջառարկայական կապեր՝

- կերպարվեստ, երկրաչափություն, կենսաբանություն,

Խթանում՝

Այս փուլի նպատակը աշակերտների հետաքրքրությունը խթանել է, խորհել նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ, վեր հանել հարցերի միջոցով աշակերտների նախնական գիտելիքները, սահմանել սովորելու կոնկրետ նպատակները: Այս փուլում կարելի է կիրառել պրիզմայի մեթոդը, ահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը: Գրել գրատախտակին մեկնաբանը «Դիզայն»՝ հիմնական հասկացություն, ինչը ենթակա է ուսումնասիրության: Միեմայի երկու վանդակներում աշակերտները գրում են մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը, օրինակ՝ ստեղծագործություն- մտահղացում:

Խմբային աշխատանքի ժամանակ պետք է նշել առաջին հնչած բառերը և խրախուսվեն ենթագիտակցական ոլորտում ծնված ասոցիատիվ կապերը: Առավել արդյունավետ է երեք շերտով բացված պրիզման, որից հետո այն սկսվում է փակվել: Պրիզման եզրափակվում է վերջնաբառով՝ ազատություն: Պրիզմայի ամփոփիչ քայլը մեկնաբանի և վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է՝ դիզայն-ազատություն, այսինքն դիզայնը մտահղացման և ստեղծագործության ազատությունն է:

Իմաստի ընկալում՝

այս փուլի ընթացքում աշակերտները տեքստի, ուսուցչի հաղորդման կամ ուսումնական որևէ այլ միջոցներով ծանոթանում են նոր նյութին և այդ ընթացքում նրանցից ակնկալվում է նոր գաղափարները: Որպես նախնական նյութ հետագա աշխատանքի համար ուսուցչի ներածական խոսքն է, որում նշվում է դիզայնի ծագման պատմության և տեսակների, նրա հիմնական տարրերի և կոմպոզիցիայի մասին: Աշակերտները պետք է իմանա ն, որ դիզայնի տարրերը միշտ եղել են մարդու աշխատանքում, դեռ հնուց ի վեր:

Մարդը միշտ ձգտել է գեղեցկության: Ձևակերպել դիզայնի սահմանումը, ծանոթացնել դիզայնի տեսակներին՝ արդյունաբերական, ճարտարապետական լանդշաֆտային, գրաֆիկական վեբ դիզայն: Բացատրել կոմպոզիցիայի և նրա տեսակների մասին, բերել օրինակներ: Գաղափար տալ գունաբանության մասին:

Կշռադատում՝

Կշռադատման փուլում աշակերտները իրենց ունեցած պատկերացումների համատեքստում խորհում են սովորածի մասին, որպեսզի վերակառուցվեն գիտելիքները; Հանձնարարել կատարել նմուշներ անհատական աղյուսակում: Կատարելով գրատախտակին գրանցումներ, կարդալ նյութը: Քննարկել մտքերն ու կարծիքները գործընկերոջ հետ, ապա քննարկել խմբերով:

Իմանա դիզայն ստեղծման պատմությունը, դիզայնի սկզբունքները:

Կարողանա ստեղծել և գնահատել գեղեցիկը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ



Ուսուցումը բարդ գործընթաց է, որն իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիրներ ինչ սովորեցնել (կրթության բովանդակություն) ,ինչու սովորոցնել(կրթության նպատակները) և ինչպես սովորեցնել (ուսուցման մեթոդիկա):

Այդ նպատակներին

հասնելն ու վերջնարդյունքների արդյունավետ ապահովումը իրագործվում է ուսումնական միջավայրում ուսուցչի ու աշակերտի համագործակցության շնորհիվ:

Ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մասը կազմում են բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը;

Հասարակության զարգացման ներկա փուլում կրթության առջև դրված են նոր մարտահրավերներ ,և հեռանկարային զարգացումները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդների կիրառման անհրաժեշտություն:

Ուստի ուսուցիչը ավանդական մեթոդներին զուգահեռ պետք է կիրառի նոր ինտերակտիվ,համագործաքցային մեթոդներ,որոնք համարվում են աշակերտակենտրոն:

Ուսուցման ընթացքում աշակերտը սովորում է նյութը ,և սովորելիս մասնակցում է որոշակի գործընթացի,կատարելով ինչպես անհատական,այնպես էլ խմբային աշխատանքներ:Ինքնակրթվում է,ինչպես նաև ձեռք բերում քննադական,ստեղծագործական մտածողություն,սոցիալական փոխազդեցության,հաղորդակցման կարողություններ և հմտություններ:

Այս հետազոտական աշխատանքը կատարելիս, եկա այն համոզման,որ աշակերտները կատարելով խմբային աշխատանքներ 90%-ից ավելին կարողացավ յուրացնել նոր թեման,ինչը խոսում է փոխներգործուն մեթոդների արդյունավետության մասին:

Գրականություն

1. «Տեխնոլոգիա» հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք
Սողոմոնյան Կ. Հ. «Աստղիկ գրավատուն» Երևան - 2010թ
2. «Տեխնոլոգիա» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր:
3. Нестереико – Краткая энциклопедия: дизайнера 1894г.
4. Համացանց:
5. <https://cloud.mail.ru/public/N9kG/bwm/S5Xzg>
6. Հովսեփյան Ս. և ուրիշներ, «Տեխնոլոգիա», դաս. դասագիրք,
7. Երևան, Տիգրան Մեծ, 2004:
8. Հայկական ասեղնագործություն, Երևան,
9. «Զանգակ-97», 2002:
10. Պապիկյան Կ., «Տեխնոլոգիա» առարկայի դասապլաններ,
Երևան, «ՎՄՎ-Պրինտ» 2019:
11. Ա. Հարությունյան, Ս. Հովսեփյան, Ժ. Ավետիսյան, «Տեխնոլոգիա» Գործնական աշխատանքներ, 5-7 դասարաններ, (տղաների և աղջիկների տարբերակ), Ուսուցչի ձեռնարկ, «ԱՍՏԴԻԿ ԳՐԱՏՈՒՆ» հրատարակչություն:

